ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/21/11807-2023

«14» 12 2023 թ.

«ՕՐԲԻՏ Ա» ՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԱՐԵԳ ՓԱՓԱԶՅԱՆԻՆ
(էլ. փոստ orbita-cjsc@netsys.am)

Հարգելի՛ պարոն Փափազյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «ՕՐԲԻՏ Ա» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00897706) միջև 2020 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-20/04» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել «**Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական**» աշխատանքներ»՝ (այսուհետ՝ Աշխատանք) համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով ներկայացված գնման ժամանակացույցի-տեխնիկական բնութագրի:

Համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի՝ պետք է մինչև 28.02.2021 թվականը Կատարողի կողմից հանձնվեին 1-ին փուլի, մինչև 30.06.2021թ. երկրորդ և մինչև 30.11.2021թ. երրորդ փուլի արդյունքները, որոնք մինչ օրս կատարված չեն (աշխատանքները՝ այդ թվում փուլային, պատվիրատուին չեն հանձնվել):

Համաձայն Պայմանագրի 6.2 կետի՝ Կողմերից որևէ մեկի միակողմանի հրաժարման դեպքում մեղավոր կողմը փոխհատուցում է մյուս կողմի բոլոր վնասները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն Պայմանագրի 6.5 կետի համաձայն՝ կատարողը պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման պայմանագրի խախտման համար, եթե չի ապացուցում, որ նման խախտումն առաջացել է իր մեղքից անկախ հանգամանքների հետևանքով և սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը չկատարելու դեպքում վերադարձնում է պատվիրատուի կողմից տրված կանխավճարը և առանձին փուլերով կատարված

աշխատանքների դիմաց վճարված գումարը, ինչպես նաև վճարում է տուգանք պայմանագրի գնի 0,5 %-ի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2020 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-20/04» գնման պայմանագրի 2.1.5 կետի ա) և բ) ենթակետերը **2023 թվականի դեկտեմբերի 14-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:**

Տեղեկացնում ենք, որ «ՕՐԲԻՏ Ա» ՓԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 (տասը) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900005570115» հաշվեհամարին վերադարձնել (վճարել) տրամադրված կանխավճարը՝ 1,721,174 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանմեկ հազար հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ գումարը և տուգանքը՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 40,568 (քառասուն հազար հինգ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ գումարը, նույն ժամկետներում վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

12/14/2023

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՓՈԽԱՐԻՆՈՂ

X

ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Signed by: ALEKSANYAN GEVORG 2604770390

ԳԵՎՈՐԳ
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Գնումների բաժին
010 59 00 47